

Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ԷԶՄԻԱՄՆԻ ԴԱՇՏԻ ՈՌՈՂՈՒՄԸ

բ. նորագոյն տեղեկութիւններ

Անյայտ են այն պատճառները, որ խանգարել են Զանգուի արխը և թէև այդ ջրի կարիքը միշտ մեծապէս զգացուել է, սակայն մինչև Գէորգ կաթուղիկոսը, մինչև 1867 թ., կարծես թէ այդ առումն միանգամայն անուշադրութեան էր մատնուել:

Մեր ձեռքի տակ չունինք ներսէս Ե-րդ Աշտարակեցի կաթուղիկոսի այն կոնդակները, որով նա հրամայել է իւր տնուան լիճը շինելու և նրան կից անտառը տնկելու: Այդ բոլոր ամենայնի հանձարեղ ծրագիրը, որի իրագործումը մեծ ծախք և ժամանակ է խլել և որը թէ գեղեցկութեան և թէ առողջապահական տեսակէտից մեծանուն կաթուղիկոսի լաւագոյն ձեռնարկութիւններից մէկն է, անտեսական մեծ կարեւորութիւն չի ներկայացնում: Այդ լճի ջուրը կարող է բաւականութիւն տալ սեռեցելու 10—20 գետնատին տարածութիւն, այն էլ երկու անգամ: Մենք ունենք մեր ձեռին ներսէս կաթուղիկոսի կոնդակներից եռաշատոր ժողովածու, դոցա մէջ նա հրամաններ է արձակում տեղապահ Ղուկաս եպիսկոպոսին և Սինօդին գործի շտապեցման մասին: Ուրիշ կոնդակներ և մանաւանդ շինութեան հաշիւը չեն պահուած¹⁾:

1. Սուքիաս արքեպիսկոպոսը մասնաւոր խօսակցութեան մէջ մեզ մի կարեւոր տեղեկութիւն հաղորդեց: Յայտնի է, որ ներսէս կաթուղիկոսը Ախալցխայի Կարապետ եպիսկոպոսին թիֆլիզի առաջնորդութիւնից հնազանդուց յետոյ հրաւիրեց Էջմիածին, Մալար վարդապետին հրաւիրակ ուղարկելով: Կարապետ եպիսկոպոսը հրամարուեց, չեկաւ: Սուքիաս արքեպիսկոպոսը յայտնեց ինձ, որ ներսէսը Կարապետին հրաւիրում էր Էջմիածին, որպէսզի յորդորի և համոզի իւր հարուստ միջոցներով վերստին շինել Զանգուի աւերուած արխը:

Զրի կարիքը գնալով աճում էր, մանաւանդ ծանր էր տեսնել վանքի անմիջական շրջապատում, Արարատեան գաշտի ամենաարգաւանդ մասում, հաղարաւոր դեսեատին պտղատու գաշտեր աւայի ընկած, որ ոռոգւելով մեծապէս կնպաստէին թէ շրջակայ աղգարնակութեան բարեկեցութեան և թէ իրեն վանքի անտեսական անձուկ կացութեան բարւորման: 1867 թ. յուլիսի 11-ին Գէորգ Գ. կաթուղիկոսը մի կոնգակ է տալիս Սինոդին այս մտքով. «Տեսեալ մեր զի գետին ավազային, որ ընդ մէջ Փարաբար գեղջ և ընդ Վաղարշապատայ է արգաւանդ, ամօր և բերրի, սակայն առ ի չգոյէ ջրոյ կայ մնայ ապարդին և առանց մշակութեան, հոգ ի մէջ առաք վերանորոգել զառուն, ամեալն աշխատութեամբ նախնեաց մերոց ի Հրազդան գետոյն... յանձն արարեալ առանձին մերով կոնգակաւ որբաղան որբեպիսկոպոսի Սարգսի Զաւալեանց...»

Սինոդն անմիջապէս ծրագիր է կազմում, որոշելով, ըստ պատուէրի կաթուղիկոսի, «ի գէտ ելցէ յետ այնր որ եիցէ կարևորութիւն գրամոց կամ այլոց պարագայից... հայթայթեցէ»

Կաթուղիկոսի և Սինոդի կարգադրութիւնների մէջ նկատելի են բարի ցանկութիւն, սակայն խոշոր ձեռնարկութեան յաջողութեան և ոչ մի գրաւական Երկու ամբողջ դար խանդարուած, 20 վերստ տարածութիւն ունեցող արխի նորոգութեան համար բաւական չէին բարի ցանկութիւնները: Այդքան ժամանակում ստեղծուել էին իրաւական նոր դրութիւններ, վանքը իւր իրաւունքից երկար ժամանակ չօգտուելով, կորցրել էր նրան: Նախ այդ մասին պիտի հոգացուէր: Նոյնքան կարևոր էր հոգալ նախագիծ և նախահաշիւ պատրաստել տալու, ժամանակի տեխնիկայից օգտուելու և ծախքերի քանակն իմանալու համար: Այդքան տարրական աշխատանքները չկատարելով, ձեռնարկութիւնը անյաջող վախճան է ունենում:

Սինոդի «գործքը, որի մէջ գտնուում են այդ առթիւ գրագրութիւնները, բաղկացած է 281 թերթից, սկսած վերջիչեալ 1867 թ. մինչև 1904 թ., որից մի բան պարզ

երևում է, որ դիմումներ, նիւթական զոհողութիւններ, աշխատանք և եռանդ չեն խնայուել նախագծած նպատակի համար: Աննպաստ են եղել հանգամանքները և կատարուած աշխատանքի մէջ էն գլխից պակասել է սխտեմը:

Գէորգ կաթուղիկոսի կոնդակով ձեռնարկած արխի վրայ աշխատում են երեք տարի, 1867—1870 թուականը և ծախսում են մօտ 4500 ռուբլի: Այդ ժամանակամիջոցում Զանգիբասարի թուրք ազգաբնակութիւնը, ենթադրելով որ վանքի առուն իրանց ջրերի քանակի վրայ ազդեցութիւն կունենայ և, կամ աւելի հաւանական, թելադրուած նենգամիտ անձինքներից, բողոքներ է տալիս մարմնաւոր իշխանութեան: Սինօգի և Երեանի նահանգապետի մէջ այդ առթիւ տեղի են ունենում մի շարք գրադրութիւններ, մինչև որ պաշտօնապէս Սինօգին թոյլ է տրւում Զանգու գետից վերցնել ջուր, բայց ոչ աւելի քան հինգ օտնաչափ իւրաքանչիւր վայրկեանում, որովհետև ինձինքն Փրելովի չափելով երեացել էր, որ Զանգիբասարի բնակիչների կարիքը լիւլի հոգացուելուց յետոյ, 5 օտնաչափ ջուր աւելորտաբար հոսում է Երասխ գետի մէջ:

«Գործից» դժբախտաբար չի երևում, թէ ինչպատճառով Զաւալեան Սարգիս արքեպիսկոպոսը սկսած աշխատանքը թողնում է անկատար. կան նոյն իսկ հակասական տեղեկութիւններ: Մի քանի գրութիւններից երևում է, որ իբր թէ աշխատանքները յաջողութեամբ վերջացել են և վանքի արեւելահարաւային սահմաններում գտնուած արքունապատկան կալուածքի կապալառուն, Գէորգ Եղիազարեանը, Սինօգից թոյլտւութիւն է խնդրում, մինչև այդ կալուածքի համար յատուկ արխ անցկացնելը, օգտուել էջմիածնի դաւմայից: Սինօգը նորան տալիս է Յայդ. իրաւունքը, միայն մի տարի ժամանակով: Սինօգի թոյլտւութեան օրագիրը գրուած է 1872 թ. նոյեմբերի 15-ին. մինչդեռ ուրիշ գրութիւններ, նոյն 1872 թ. ցոյց են տալիս, որ արխը տակաւին պատրաստ չէր, այլ Սինօգը նոր ի նորոյ պատրաստել է տուել մասնագէտ ինձինքների ձեռքով 20 վերստ արխի նախագիծ, 20,000 ռուբլու ծախսի նախահաշուով: Մախքի

Համար պահանջուած 20,000 ո. խոշոր գումարը Սինօգն անկարող լինելով հայթայթելու, իւր ստորագրեալ վիճակային և հոգևոր տաճարների, նաև Արարատ ամառգրի և Կավկազ թերթերի միջոցով, արխի շինութիւնը կապալով տալու յայտարարութիւններ է տարածում ամենուրեք: Ըստ մտաց յայտարարութիւնների կապալառուները պիտի շինէին արխը սեփական միջոցներով և մինչև 16 տարի ձրիապէս օգտուէին իրենց ոռոգած վանքապատկան հողերից:

Երևի կապալառուներ չեն գտնուել: Էջմիածնում չեն յուսահատում. մտածում են անպատճառ գլուխ հանել գործը: Սակայն նոր դժուարութիւններ են ծագում թուրք ազգաբնակիւթեան նոր դանգաժների հիման վրայ: Նորից է մարմնաւոր իշխանութիւնը միջամտում, առաջարկում է Սինօգի հաշուով նորից չափել Զանգուի ջուրը: Պահանջուած գումարը Սինօգը վճարում է. ինչի՞նք Պսարեք յատուկ մասնաժողովի հետ քննում է խնդիրը և արձանագրութիւն կազմում, լսելով Զանգիբաթարի բնակիչների բողոքի պատճառաբանութիւնները և Սինօգի ներկայացուցչի հիմունքները:

Այնուհետև ինչի՞նք Պսարեք անձամբ չափում է ջուրը և գտնում է, որ աժառուայ ամենաշոգ ժամանակում ևս գետի մէջ ահագին քանակութեամբ ազատ ջուր է մնում: Նա իւր գրութեան վերջում այս կարծիքն է յայտնում, «ազատ մնացորդն ջրոյ ի Հրազդան գետն կազմէ 22,6 քառակուսի ֆունտ ի միում սեկունդի, պարտ է եզրակացնել զի ի Հրազդան գետոյ մարթ բաժանել վանից Էջմիածնի զջուրս 20 քառակուսի մունս ի միում սեկունդի առանց վնասու բնակչաց Գառնի Բասարա եւ Երեւանայ Կաղափ»: Նորա կարծիքով 20 քառակուսի տոնաշափը պէտք է ինկատի ունենալ ջրի ամենապակաս ժամանակում, յունիսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը, իսկ տարուայ միւս ժամանակները բոլոր բնակիչները կարող են ջուր վերցնել որչափ կամենան, առանց միմեանց վնասելու:

Այս պաշտօնագրի պատճէնը Սինօգին հաղորդուած է 1883 թ. սեպտեմբերի 20-ին Երևանի նահանգապետի

գրութեամբ: Անցել են 30 տարի. Զանգուից հանած ար-
խերի թիւը և նոցա միջով անցրած ջրերի քանակը անհա-
մեմատ աւելացել են և այնու ամենայնիւ գետի մէջ տար-
ուայ ամենաշոգ ժամանակներում ահագին քանակութեամբ
աւելցուել ջրեր են մնում:

1910 և 1911 թ. տեխնիկայի նորագոյն եղանակով և
էջմիածնի դրամական միջոցներով շինել տուած ջրաչափ
կայարանները ցոյց են տուել, որ այժմ ևս գետի մէջ տ-
մենանուաղ ժամանակը մնում է 40 բաշ ազատ ջուր, որ
թափւում է Երասխի մէջ:

Հետեւապէս բնակիչների բողոքը բացարձակապէս ան-
հիմն է. և չափազանց հակաբաղադրակրթական և հակա-
պետական—տնտեսական տեսակէտից—քայլ են կատա-
րում այն անձինք, որ ինչպէս հնում, այժմ ևս աշխա-
տում են գոգոնել ժողովրդին և նորա տգիտութիւնից ոգտ-
ուելով, անտեղի և անօգուտ գանգատներ են գրել տա-
լիս այդ մեծ գործը խանգարելու համար: Առաջներում
չարամիտ և անմիտ մարդիկ իսկապէս հասել են նպատակի,
որովհետեւ չնայած Թրելով և Պսարե ինժինեւրների կարծիք-
ներին, քաղաքական իշխանութիւնը մինչև ներկայ 1912 թ.
չարունակ անհետեւանք էր թողնում Սինօգի բազմադիմի
միջնորդութիւնները:

Անցեալ դառն փորձերից խրատուած Սինօգը, որպէս
ղի անհետեւանք չմնան իւր դիմումները և ոչ էլ անտեղի
ծախքեր լինին. 1910 թուին նախապէս իւր ներկայացուցչի
միջոցով բանակցութիւն սկսեց Կովկասի ջրաբաշխական
վարչութեան տեսուչ Պետրովի հետ, թէ արդեօք կյարգուի
իւր նոր միջնորդութիւնը և ապա թէ կատարեց հարկա-
ւոր քայլերը: Վանքը կամենալով օգտուել և արգիւնաւէտ
կացուցանել իւր ամայի հողերը, ամենեւին չէր կարող մտա-
ծել անջրդի դարձնել Զանգիբասարի մեծ ազգաբնակո-
ւթեան մշակուած դաշտերը, նա սկզբում տեսչին ուղղած
իւր միջնորդութիւնը այսպէս ձևակերպեց. թոյլ տալ նախ և
առաջ գարնան և աշնան եղանակներին ջուր ստանալ, երբ
գետի մեծաքանակ ջրերը մինչև իսկ բնակիչներին մեծամեծ

Ֆլուսներ են պատճառում, յուսալով իւր գաշտերից ստանալ ցորեն, գարի, խոտ և ոչ բամբակ, բրինձ, խաղող ևն։ Երբ իւր խնդիրը այս սահմանափակ շրջանակում՝ յարգուեց, Սինօդը երկու տարի, 1910 և 1911 թուերին ջրերի տեսչի տրամադրութեան տակ դրեց 500-ական ռուբլի ջրաշափական կայարան հաստատելու Ձանգու գետի այն մասում, ուր այլ ևս արխեր գոյութիւն չունենա։ Պարբերական չափումները անհերքելի ապացուցեցին, որ ջրի ամենապակաս ժամանակն անգամ 40 բաշ աւելորդ ջուր է մնում գետի մէջ և նոր խնդիր յարուցեց, որ այդ ևս իրան տրուի։

Սինօդի օրինակից խրախուսուած, ջուր ստանալու խընդիրներ յարուցին Վաղարշապատ, Չորանքարայ և ի վերջոյ Ալիբէկլու գիւղերի հասարակութիւնները, 1911 թ. վերջը ջրերի տեսուչը յատուկ գրութեամբ Սինօդին յայտնեց, որ գարնան և աշնան համար թոյլ է տալիս Էջմիածնի վանքի սեպհական հողերի համար վերցնել 24 բաշ ջուր, Վաղարշապատի բնակիչներին 15 բաշ և Չորանքարեցի թուրքերին 8 բաշ։ Իսկ այս 1912 յունվարի 31-ին նոյն վարչութիւնը հաստատեց այդ և բացի յիշեալներից, մասնակից արեց նաև Ալիբէկլու հայ գիւղացիներին և թոյլ տուեց Ձանգուից վերցնել գարնան ժամանակ 51 բաշ, — 4 բաշը Ալիբէկլուեցիներին — ամառուայ համար 40 բաշ, 24-ը վանքին, Սակայն Տէր փոխարքան տեսչի այդ որոշումը հաստատելու ժամանակ, գետում որոշ քանակութեամբ ազատ ջուր թողնելու գիտաւորութեամբ, երկու բաշ ամառուայ քանակութիւնից կրճատել է, այնպէս որ ամառը փոքր ոլիտի ստանայ 22,8 բաշ, Վաղարշապատը 7,6, Ալիբէկլուն և Չորանքարան 3,8-ական բաշ։

Արևի յատակագիծը Սինօդը յանձնել է պատրաստելու Ջաւախիշին և Մանուշարեան ինժինէրներին, որոնք իրենց աշխատանքով միանգամայն գոհացել են թէ Սինօդին և թէ ջրաբաշխական վարչութեանը, որ առանց որ և է առարկութեան հաստատել է, նոցա կազմած նախահաշուով առուի համար ծախք կարող է լինել 90,000 ռուբլի։

հաշուած նաև 10,000 ո. նախնական ծախքերը, իւրաքանչիւր բաշ կարող է նստել մօտ 2000 ո. հետևապէս վանքի բաժինն է 48000 ուրլի:

Այդ ծախքը հոգալու համար տողերիս գրողը, որ Սիւնօղից հրաման ունի վարելու ջրի վերաբերեալ խնդիրները, տարոյս փետրուարի սկզբները գնաց Բագու և այնտեղ բանակցութիւն ունեցաւ այն մասնաժողովի հետ, որ կազմել է հանդուցեալ Բողգան Մոյիսէեիչ Դոլուխանեանը յատկապէս էջմիածնի հողերը սուղելու համար: Յանձնաժողովը լսելով Սիւնօղի կատարած և յաջողութեամբ պսակուած գործի մասին, ուրախութեամբ յանձն առաւ հոգալու արխի հանելու համար վանքի բաժին բոլոր ծախքերը և իւր կողմից նշանակել մի ինժիներ, որ վերին հրակողութիւն պիտի ունենայ կատարուող ծախքերի և աշխատանքների վրայ:

Յոյս մեծ կայ, որ եթէ վերոյիշեալ գիւղական հասարակութիւնները, որ չափազանցօրէն զգում են ջրի մեծ կարիքը, ճշտութեամբ և առանց գժուարութեան կատարեն իրենց պարտքը պարբերական վճարումներով, դարերից ընդհատուած և այնքան անհրաժեշտ տնտեսական և քաղաքակրթական ձեռնարկութիւնը ի գլուխ հանուի: Գիւղացու դառն աշխատանքը մէկը տասով կվարձատրուի. երկիրը կշէնանայ, ընակիչների բարեկեցութիւնը կաճի, առանց մաղաչափ փառ պատճառելու Զանգիբաթարի մեր հարեան աղգարնակութեանը, որը անհիմն կերպով է անհանգստանում և իւր կօպէկները ծախսում չարամիտ փաստաբանների ձեռքով:

Այն ժամանակներում երբ էջմիածինը անյոյս բանակցութիւններ էր մղում Զանգուից ջուր ստանալու համար, նա ուրիշ միջոցների էլ էր գիմում: 1892—93 թուերին, երեմիա եպիսկոպոսի տեղապահութեան օրով, վանքը մեծ գումար ծախսեց հիմնովին մաքրելու, վերանորոգելու և ընդլայնելու Յակոբ, Սիմէօն և Փիլիպպոս կաթօղիկոսների շինած քանքանները, նոյն գործը շարունակել տուեց և Խրիմեան կաթօղիկոսը, քանքանի նոր գիծ աւել-

լացնելով, նախկինին զուգահեռաբար, Քասախ գետի հունից աւելի գէպ արևելք թեքուած:

Նոր առաջարկ էր ինջիներ Կիրակոսեանի գիմումը, որով գիմում էր Սինօգին տալ իրան 40,000 ուրլի մատորների միջոցով վանքի էլէքտրական լուսաւորութիւն մատակարարելու, էլէքտրազաց, կալսելու մեքենայ և ջրհան մեքենաներ սարքելու, բայց գլխաւորապէս ստորերկրեայ ջրեր հանելու հարիւրաւոր գետնատինների համար¹, նրա ձեռնարկութիւնը կիսատ մնաց, յետոյ վանքը մօտ 200 սաժէն ստորերկրեայ տուններ կամ քանքաններ փորելով, 15 արշին խորութեան վրայ, Կիրակոսեանի թողած նաստաներով ամառ ժամանակ ստանում է 8 գիւմ ջուր երկու խողովակով: Սակայն կատարուած աշխատանքը թերի է, բայց կարելի է շարունակել:

Պ. Գ. Աղաբաբեանը, ինջիներ երկրաբան, 1910 թ. ձմեռը իմ խնդրանք եկաւ առ տեղեաւն ուսումնասիրելու Էջմիածնի ստորերկրեայ ջրերի քանակը, նոցա հոսանքի ուղղութիւնը և, թէ կարող է արդեօք շահաւէտ լինել, նո-

1. Պ. Կիրակոսեանը յետոյ կապալով վերջրեց երևանում գտնուող վանքապատկան ջրաղացները, հաստատեց էլէքտրական կայարան և առաջարկում էր հանգուցեալ Դոլուխանեանին այնտեղից էներգիա ստանալ կամ Սև ջրից ջուր բերելու կամ ստորերկրեայ ջուր հանելու համար: Պ. Կիրակոսեանը այժմ ևս իւր մտքից և յոյսից չի հրաժարուում, նա սպասում է, որ վանքը և կամ մասնաւոր ձեռնարկողներ երբ և է կօդտուեն նրա առաջարկից: Ճանապարհորդական հաղորդակցութեան Օկրուզը—(Շրջանը) մերժել է Սինօգի Սեանի լճից ջուր ստանալու համար յարուցած միջնորդութիւնը, այդ մերժումը պատճառաբանուած է պ. Կիրակոսեանի մի գրութեան հիման վրայ, որ որեւէ լուրջ քննութեան դիմանալ չի կարող: Գուցէ մենք առիթ և ժամանակ ունենանք, օգտուելով պ. Կիրակոսեանի իւր իսկական գրութիւնից, որ մեր ձեռքին է և այն խօսակցութիւնից, որ նրա հետ ևս ունեցայ Քամոյեանց եկեղեցու խորանում այդ եկեղեցու օժման օրը, թէ ինչ շարժառիթներ են թելադրել պ. Կիրակոսեանին գրելու իւր յիշեալ գրութիւնը և առանց հիմնական և գիտական հիմունքների պատճառ դառնալու մի կարևոր և մեծ ձեռնարկութեան խանդարման:

ցանից օգտուելու: Նա չափումներ կատարեց վանքի բազմաթիւ հորերում, չափեց Գայանէի, Հռիփսիմէի, գիւղի հորերը. նոյն նպատակի համար շրջեց մերձակայ գիւղերը, ծանօթացաւ Սե ջրի ակունքների հետ և պատրաստեց մի գեղեցիկ զեկուցում, որ հրատարակել է առանձին բրոշիւրով: Նրա եզրակացութիւնն այս է. Էջմիածինն ունի 7312 դեռեաւոր հոգ, մի մասը համարելով մշակագործութեան անյարմար. 4—5000 դեռեաւորն կարելի է մշակել, որը բաւարար չափով ջրելու համար ցանկալի է ունենալ 240 բաշ:

Էջմիածինը այժմ ունի 40 բաշ Քասախից, 10 բաշ Սե ջրից, մօտ 2—3 բաշ քանքաններից, ընդամենը 59 բաշ:

Արագած և սրա հրաբխային լեռները իջնելով դէպի դաշտը կազմում են աւազի և խճի չափազանց հաստ շերտեր, որի տակը կաւով է ծածկուած. երկնքից տեղացող անձրևներն ու ձիւնը թափանցելով լաւայի շերտով, իբրև սպունգի մէջ, ձմռում են վերոյիշեալ շերտերում: Այդ ջրերը կազմում են մեղ յայտնի մեծ աղբիւրներ—գետակները և ահագին ճահիճները. Սակայն մի մասն էլ մնում է աւազի և խճի շերտի մէջ, և փորելով կարելի է ստանալ հորեր կամ քանքաններ: Ստորերկրայ ջրերի քանակը շատ մեծ է. ապացոյց Սե ջուր գետակը, Ուլուխանլու կայարանի մօտ 12 սաժէն խորութեամբ փորուած արտեզեան ջրհորը և մասամբ Էջմիածնի քանքանները: Քանի որ անհերքելի է ջրերի առատութիւնը, հնարաւոր է գիտական եղանակով քանքաններ փորել, օգտուելով լեռնային աշխատանքների սիստեմներով, և առատ ջուր ստանալ: Պ. Աղաբաբեանը հաշուում է որ 1700 դեռեաւորն, անտառից ցած, հոգը կարելի է ջրել քանքանի վրայ ծախսելով առ առաւելն 30,000 ռուբլի. իսկ ամբողջը, մօտաւորապէս 4500 դեռեաւորն, հնարաւոր է 70,000 ռուբլու ծախսով ջրել:

Մենք մեր առաջի յօդուածում յիշել ենք, որ Սե ջուրը հոսում է Արագած լեռնից. որ լաւայի հաստ շերտը ծածկում է այդ վիթխարի աղբիւր գետի երեսը և որ նա

գուրս է ժայթքում՝ Արարատեան դաշտի ամենացած մասում։ ռուտի նա հասում է ըստ մեծի մասին անշահաւէտ կերպով։ Հարթաշափական գործիքով ապացուցուած է, որ նրա ակունքները 25 սամէն աւելի ցած են քան էջմիածնի հողերի բարձր մասերը։ Զուարթնոցի շրջակայքի բլուրները, ռուտի շատ գծուար է նրանից ինքնահոս արկներ վերցնելը։ Սակայն անտառից դէպի հարաւ արեմուտը ընկած մասերը, մօտ 800 կամ 1000 տուաւելն 1200 դեսեաաին կարող են ոռոգուել։ Այդ աշխատանքը 1902 թուին Սինոդը յանձնեց ոմն Վասիլե տերինիկի, որը հաւատացրել էր Սինոքին, թէ հնարաւոր է մեծ պատնէշ կառուցանել Սև ջրի ակունքների առաջը, բարձրացնել ջրերը և ինքնահոս արկով ջրել վանքի ներսիսեան կոչուած անտառի ներքևի մասերը։ Կառուցուեց պատնէշը, ծախսելով մօտ 10,000 ռ. սակայն հետեանքը շատ ողբալի էր։ Լճացած մեծաքանակ ջրերը փակեցին աղբիւրների բերանները, որ շրջելով բոլորովին ուրիշ տեղից սկսեցին գուրս ժայթքել միանգամայն անօգուտ գարձնելով մեծածախս պատնէշը¹։

Սակայն Սև ջրից օգտուելու միտքը չթողնուեց։ Հանդուցեալ Դաւութանեանը երկու անգամ մասնադէտ ինժիներներ ուղարկեց, որ հարթաշափեն այդ ջրի ընթացքը և էջմիածնի հողերի մակերևոյթը, միևնոյն ժամանակ նախագծեր պատրաստեն թէ որքան կարժենայ երկաթեայ խողովակներով և նաստսներով 75 բաշ ջուր բարձրացնելը²։ Նաստսները պիտի գործեն կամ նաւթային մօտորներով

1. Այդ արխի ծրագիրը կազմել էին Թումանեան և Վասիլե ինժինները։ սորա հաշուել էին 13 վերստ 200 սամէն արխի երկարութիւնը և կամեցել էին ջրել 1220 դեսեաաին։ ծախսելով 20 — 25,000 ռուբլի։ Ինժիներ Աղաբաբեանը գտնում է, որ այդ միտքը իրագործելի է, հարկաւոր չէր պատնէշ չինել և ինքնահոս արկով կարելի է ջրել 1020 դեսեաաին։

2. Փետի ջուրը աճատ է։ ջրերի տեսուչը վանքի միջնորդութիւնը յարգելով թոյլ է տուել 65 բաշ նոր ջուր վերցնելու, բայց այդ վանքը ունի 10 բաշի իրաւունք։

կամ ինջիններ Կիրակոսեանի երևանում հաստատած էլէկտրակայարանից ստացուած էներգիայով¹։ Դուրսխանեանի մահուանից յետոյ, երբ Բագուի յանձնաժողովը նախագահ ընտրեց Դաւիթ Աւան—Իւզբաշեանին և Սինօդի կողմից բանակցութիւնների համար եւ կարգուեցի, աննպաստ վերաբերմունք ցոյց տուի ոյդպիսի արհեստական մեծածախս և անշահաւէտ ձեռնարկութեանը, եւ հաշոււմ էի, (ոչ պակաս 150,000 ռ.) որ անշահաւէտ է, ինկատի ունենալով ամբողջի համար միանուագ կատարուելիք ծախքը, էլէկտրական կայարանի կամ էներգիայի տարէցտարի կատարուելիքը (մօտ 15,000), այն կապալադրամը որ այժմ վանքը առանց որ և է սոսոքման ստանում է ենթակայ հողերից (մօտ 14,000) և վերջապէս հողի քանակը (1200—1800), գտնում էի որ այդքան հողը դրամի տոկոսի, տարեկան ծախքի և այժմուայ ստացուած արդիւնքի չափով արդիւնք տալ երբէք չի կարող, հետևապէս վանքը փնաս կունենայ։ Դեռ մի կողմ՝ թողած պատահարները։

Բայց վանքը Սև ջրից օգտուելու մտքից և իրաւունքից չի հրաժարուել. Սինօդը խնդրել է ջրաբաշխական

1. Պ. Դուրսխանեանի պատրաստել տուած նախագծերն են. I. ինջիններ Կազասինը. սա առաջարկում է լայնացնել վանքի Սև ջրի արխը. նասաններով և երկաթի խողովակնկրով բարձրացնել 43 բաշ ջուր և ջրել մօտ 600 դեսեսատին հող։ Մախը հաշուած է—միանուագ 140,113 ռ. և տարեկան 19,638 ռ. 47 կ. II. ինջիններ Լիսիցեանի և Տէր-Վարդանեան, որ նոյնպէս ծրագրել են Սև ջրից ջուր բարձրացնել ոսոգել 2220 դեսեսատին, մի այլ ծրագրով միայն 1400 դեսեսատին։ Դոցա ձեռնարկութեան ծախքերի նախահաշիւը չունենք ձեռքի տակ։

III. Ինքնաբերաբար ինջիններ Կիրակոսեանը մի նախագիծ է առաջարկել, ցոյց տալու, որ էջմիաձնում կարելի է փորել 1800 սափէն երկար և 5 սափէն խոր քանքան. նա միանուագ ծախք հաշոււմ է 155,000 ռուբլի Պ. Աղաբաբեանը գտնում է, որ մեքենաների կարիք չկայ. պ. Կիրակոսեանի քանքանը, ի նկատի ունենալով նրա խորութիւնը, անտառի մօտ դետնի երես դուրս կգայ. որի համար ծախք պէտք կլինի առ առաւելն 9000 ռ. և ոչ 130,000 ռ. նասոսների և էլէկտրականութեան համար։

վարչութիւնից երկու տարով (1912—1913) ևս երկարաց-
նել նախագիծ պատրաստելու իրաւունքը, յուսալով թէ
կարող է աւելի աժան և ձեռնտու կերպով օգտուել այդ
ջրից։

Որպէսզի լրացրած լինենք ջրային բոլոր միջոցները,
որոնցից էջմիածինը փորձել է օգտուելու, յիշենք նրա ա-
մենավերջին միջնորդութիւնը 1911 թ. Սինօղը նոր գրու-
թեամբ դիմեց ջրերի տեսչին և խնդրեց թոյլ տալ Սեանի
լճից ամառուայ երեք ամսուայ ընթացքում՝ վերցնել 80-ական
բաշ վանքի սեպհական, 50-ական բաշ Վաղարշապատի նա-
ֆարապատկան, 20 բաշ Զորանքեարեցիների հողերի համար։
Նոյն թուի Օգոստոսին Թիֆլիզից հեռագիր ստացայ, որ
ինչիներ գիտրաւիկների խորհուրդը յարգել է Սինօղի
միջնորդութիւնը, բայց որովհետեւ Սեանի վրայ նաւագնա-
ցութիւն է տեղի ունենում. ուստի անհրաժեշտ էր նաև
ճանապարհների հաղորդակցութեան օկրուգի կարծիքը։

Այս Գունուարին, առաջ դրսէ դուրս և ապա ինչիներ
Կիրակոսեանից լսեցի, որ օգրուգը բացասաբար է վերա-
բերուել այդ խնդրին և մերժել է։ Յետոյ իմացայ, որ այդ-
մերժումը կատարուել է նոյն Կիրակոսեանի գրաւոր կար-
ծիքի հիման վրայ. — նա օկրուգում՝ պաշտօնեայ է։

Պ. Կիրակոսեանի և օկրուգի գրութիւնների պատ-
ճէնները իմ ձեռիս են։ Սակայն յոյս մեծ ունիմ, ի նկատի
ունենալով պատճառաբանութիւնների անհիմն լինելը, որ
վանքն ու շրջակայ գիւղերը այդ իրաւունքը ձեռք կրե-
րեն, ապացուցանելով որ Սեանի լճից տարուայ մէջ միայն
երեք ամիս օգտուելով և 9 ամիս փակելով հոսող ջրի
բերանը, հազիւ թէ այդ նշանաւոր լիճը երբ և է պ. Կի-
րակոսեանի գուշակած ճահիճը դառնայ։ Քաղաքակը-
թական և տնտեսական մեծ ձեռնարկութիւնները միշտ
ունեցել են և կունենան հակառակորդներ, թէ անհատա-
պէս շահագոգոուած անհատներից և թէ տգիտութեան
մէջ խարխափող ամբոխից։ Սակայն յառաջագիմութիւնը
պէտք է որ յաղթանակէ։

էջմիածնի վանքը երկար աշխատութիւններից, ծախ-

սերից և միջնորդութիւններէից յետոյ վերջապէս ձեռք է բերել Զանգուից ջուր ստանալու իրաւունքը. պատրաստուած է նախագիծը և հաստատուած պաշտօնապէս. գրամական կողմը ապահովել են Բագուեցիները. այս գարնան կ'ձեռնարկուի և գլուխ կ'հանուի այդ մեծ գործը:

Որովհետեւ 24 բաշ ջուրը չի կարող վաճարի կարիքներին բաւարարութիւն տալ, մնում է ապագայում օգտուել Սեանայ լճից, Սե ջուր գետից և ստորերկրեայ ջրերից: Խօսք լինել չի կարող, որ ամենաձեռնտուն և նպատակաշարժարը Սեանի լճի ջուրն է, յետոյ արդէն Սե ջուրն ու քանքանը: Սե ջրի նկատմամբ Սինօգի գործերում կայ պ. Գ. Աղաբաբեանի մի առաջարկը. — քանի որ այդ ջրերը հոսում են Արագած լեռնից, նորա կարծիքով կարելի է նախնական փորձերով ստուգելուց յետոյ, աւելի բարձր մակերևոյթի վրայ բռնել նրա հոսանքը և առանց մեքենաների, ինքնահոս արխով ջրել էջմիածնի հողերի ամենաբարձր մասերն անգամ:

Մեղրայ Եպիսկոպոս

20 Մարտի.

